ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Դանիելյան,

ի պատասխան Ձեր 14.10.2025թ. հ. 239-2025թ. գրության՝ տեղեկացվում է.

2025 թվականի պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների շրջանակում Քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ ձեռնարկվել է «Երևանի Զորայր Խալափյանի անվան հ.156 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերումը, իսկ «Երևանի Գևորգ Չաուշի անվան հ.188 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հիմնանորոգման անհրաժեշտությունը պարբերաբար ներկայացվում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ հիմնանորոգման և/կամ վերակառուցման ծրագրում ընդգրկելու նպատակով:

Երևանի 2026 թվականի բյուջեով հանրակրթական դպրոցների հիմնանորոգում նախատեսված չէ՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 70-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթի հիմքով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ